շեշտելով, վանահայրը արտայայտեց իր միաբանութեան բարձր առանձնայատկութիւնները՝ ասելով.

— Ձմեռոայ ամենասաստիկ ցրտերի ժամանակ անգամ դրանք վառելու սովորութիւն չունեն, իսկ դրանց անկողինները իրանց զգեստն է լինում: Իմ օրերում դրանք աւելի սովորեցին «գետնախշտի» կեանքին:

Վերջին խօսքերի մէջ նշմարւում էր վանահօր անմեղ պարծենկոտութիւնը, որ բխում էր նրա վերին աստիճանի խստակեցութեան զգացմունքից:

— Նրանք չե՞ն հիւանդանում, — հարցրեց Ասլանը:

— Խիստ հազիւ է պատահում, որ իմ միաբանները հիւանդանային կամ հիւանդութիւնից մեռնէին: Մահը հասնում է նրանց այն ժամանակ, երբ իրանք խնդրում են եւ երբ պատրաստ են նրան ընդունելու:

Բայց մենք խուցերից մէկի մէջ գտանք մի հիւանդ: Միայնակ, անխնամ պառկած էր նա սառն յատակի վրայ եւ ծածկոել էր իր վերարկոի մէջ, խորին կերպով հառաչանքներ էր արձակում: Ասլանը առաջարկեց բժշկական օգնութիւն մատուցանել: Բայց վանահայրը արգելեց՝ ասելով.

— Թող այդ տանջանքը ապաշխարութիւն լինի նրան...

Ի՞նչ յանցանք էր գործել, ինչո՞վ էր մեղաւոր ողորմելին, այդ մասին վանահայրը ոչինչ չասաց:

Վանքի զանազան շինուածքները տեսնելուց յետոյ մտանք ժամատունը: Այստեղ, տաճարի աջակողմեան խորանում, պահւում էին հին ձեռագիրները: Խորանը այնքան մութն էր, որ վանահայրը իսկոյն մոմ վառեց: Մի պատուհանի մէջ, խառնաշփոթ կերպով միմեանց վրայ ածած, փոշու եւ բորբոսի թանձրութեան տակ ծածկուած գտանք մեր նախնեաց գրաւոր վաստակները: Այդ վայրենի անհոգութիւնը տեսնելով, Ասլանը այլեւս չկարողացաւ ապել իր վրդովմունքը, ասաց.

— Ես չեմ կարծում, որ Լանգթեմուրը այսպէս անփոյթ կերպով վարուած լինէր հայոց գրքերի հետ: Եթէ ճիշտ է աւանդութիւնը, թէ նա տարաւ հայոց գրքերը, պէտք է ճիշտ համարել եւ այն, որ Սամարկանդում մի առանձին աշտարակ շինել տուեց եւ նրա մէջ մեծ խնամքով էր պահում այդ գրքերը:

Ասլանի նկատողութիւնը ամենեւին չվիրաւորեց վանահօրը. նա բաւական սառնասրտութեամբ պատասխանեց.

— Անձրեւի եւ ձիւնի ժամանակ այնտեղից կաթում է, պարոն բժշկապետ, — նա ձեռքով ցոյց տուեց քայքայուած խորանի առաստաղը, — այդ խո-